



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

30 April 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Ձեզանից շատերն են լսել, որ նահանգապետ Նյուսումը ցանկանում է հնարավորին չափ շուտ բացել դպրոցները: Ինդրում եմ հասկանալ, որ այն հրաման չէ, այլ առաջարկ: Մենք տեղական մասշտաբով և կորոշենք թե երբ բացել դպրոցները: Այս որոշումը հիմնված կլինի առողջապահական և պետական ուղեցույցների վրա և կկենտրոնանա մեր աշակերտները և աշխատակիցների անվտանգության վրա: Մենք տարբեր իրավիճակներ են նախապատրաստում, բայց չենք նախատեսում դպրոցները բացել օգոստոսի 17-ից շուտ:

1. Ամառային դպրոցի դասընթացներ.

Հիմնվելով առողջական և պետական ընթացիկ ուղեցույցների վրա, ամառային դպրոցի դասընթացները կընթանան հեռակա ուսուցման միջոցով: Այն կսկսվի **2020 թվականի հունիսի 1-ին** և կավարտվի **2020 թվականի հուլիսի 2-ին (Հատուկ ուսուցման ծրագրի երկարացված տարին կավարտվի հուլիսի 2-ին)**: Լրացուցիչ տեղեկություն կստանանք դասընթացների ժամերի վերաբերյալ: Ահա ամառային դպրոցի դասընթացները.

Տարրական դպրոց.

1. **Հատուկ ուսուցում.** (Երկարացված ուսումնական տարի այն աշակերտների համար, որոնց IEP ծրագրում նշված է, որ պետք է մասնակցեն երկարացված ուսումնական տարվա դասընթացներին, քանի որ նրանք հատուկ կարիքներ ունեն) - Հատուկ ուսուցման գրասենյակը կապ կհաստատի այս ընտանիքների հետ մոտակա 2 շաբաթների ընթացքում: Հատուկ ուսուցման ծրագրի վերաբերյալ հարցերը կարող եք էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել Հատուկ ուսուցման վարիչ Թամարա Շերնին tamaraschiern@burbankusd.org հասցեով:
2. **Անգլերեն սովորողներ (ELs)** - Անգլերեն սովորող աշակերտների ընտանիքները հրավերք կստանան մասնակցելու համար: Անգլերեն սովորողների ամառային դասընթացների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար, ինդրում եմ էլեկտրոնային փոստի միջոցով կապ հաստատել Տարրական ուսուցման վարիչ դոկտոր Փիտր Քնապիկի հետ peterknapi@burbankusd.org հասցեով:

3. **Սովորել, մեծանալ և բարգավաճել (Learn, Grow, Thrive (YMCA))** – Դժբախտաբար, այս տարի, մենք պետք է **չեղյալ համարենք** այս ծրագիրը: Հարցեր ունենալու դեպքում, խնդրում եմ էլեկտրոնային փոստի միջոցով կապ հաստատել Տարրական ուսուցման վարիչ դոկտոր Փիտր Քնապիկի հետ peterknapik@burbankusd.org հասցեով:
4. **Երկլեզվյա ուսուցման ամառային դպրոցի դասընթացներ** – Դժբախտաբար, այս տարի, մենք պետք է **չեղյալ համարենք** այս ծրագիրը: Հարցեր ունենալու դեպքում, խնդրում եմ էլեկտրոնային փոստի միջոցով կապ հաստատել Տարրական ուսուցման վարիչ դոկտոր Փիտր Քնապիկի հետ peterknapik@burbankusd.org հասցեով:

Միջանկյալ և միջնակարգ դպրոցներ.

1. **Հատուկ ուսուցման** երկարացված ուսումնական տարի և կրեդիտի վերականգնում. - (Երկարացված ուսումնական տարի այն աշակերտների համար, որոնց IEP ծրագրում նշված է, որ պետք է մասնակցեն երկարացված ուսումնական տարվա դասընթացներին, քանի որ նրանք հատուկ կարիքներ ունեն: Կրեդիտի վերականգնում միայն մի քանի առարկաների համար:) Հատուկ ուսուցման գրասենյակը կապ կհաստատի այս ընտանիքների հետ մոտակա 2 շաբաթների ընթացքում: Հատուկ ուսուցման ծրագրի վերաբերյալ հարցերը կարող եք էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել Հատուկ ուսուցման վարիչ Թամարա Շերնին tamaraschiern@burbankusd.org հասցեով:
2. **Անգլերեն սովորողներ (ELs)** - Անգլերեն սովորող աշակերտների ընտանիքները հրավերք կստանան մասնակցելու համար: Անգլերեն սովորողների ամառային դասընթացների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար, խնդրում եմ էլեկտրոնային փոստի միջոցով կապ հաստատել Կրթական ծառայությունների գերատեսչի տեղակալ դոկտոր Ջոն Պարամոյի հետ johnparamo@burbankusd.org հասցեով:
3. **Սկզբնական կրեդիտ առողջապահական (Health) դասընթացների համար** – Այս դասընթացը կիրամցվի ԲԴՄԾ-ի կողմից՝ համացանցային դասընթացների միջոցով, 9-րդ դասարան փոխադրված աշակերտներին:
4. **Անկախ ուսուցման ակադեմիա (Independent Learning Academy (ILA))** – Այս ծրագիրը կիրամցնի ամառային դպրոցի դասընթացների իր սովորական դասերը:
5. **Շրջանից դուրս ամառային դպրոցի դասընթացներ** - Դպրոցական շրջանը չի կարող կրեդիտի վերականգնման կամ սկզբնական կրեդիտի այլ դասընթացներ հատկացնել, բացի առողջապահական (Health) դասից: Աշակերտները կարող են խնդրանք ներկայացնել դասընթացը նորից վերցնել կամ էլ սկզբնական կրեդիտ ստանալ շրջանից դուրս գործող ծրագրերի միջոցով: Այս դասընթացները պետք է նախապես հաստատված լինեն Կրթական ծառայությունների գերատեսչի տեղակալ դոկտոր Ջոն Պարամոյի կողմից: **Խնդրում ենք դիմել ձեր դպրոցի խորհրդատուին (counselor) խնդրանքի դիմումն ազդարարելու լրացնելու համար:**

2. Տարեվերջյան միջոցառումներ/հանդեսներ.

Մինչդեռ, մենք բոլորս ցանկանում ենք անձամբ մասնակցել տարեվերջյան միջոցառումներին կամ հանդեսներին, մենք պետք է սպասենք և տեսնենք, թե երբ կարող ենք այն կազմակերպել և որոնք են լինելու սահամանափակումները մեր աշակերտների և ընտանիքների համար: Միաժամանակ, դպրոցներն աշխատում են տարեվերջյան համացանցային միջոցառումներ կազմակերպել աշակերտների ձեռքբերումները տոնելու համար: Խնդրում եմ նշել, որ դպրոցների մեր

տնօրենները սպասում են ձեր առաջարկություններին և հաշվի են առնում տարբեր
իրավիճակներ:

Միասին աշխատելով մենք ավելի հզոր ԲԴՄՇ կկառուցենք: Նորությունների հաջորդ թողարկումը
կստանաք **հինգշաբթի, մայիսի 7-ին**:

Հոգատարությամբ,

Մաթ



Դոկտոր Մաթ Հիլլ
Գերատեսուչ